

# Ա Ն Պ Ո Զ Հ Ո Ր Թ Ը Ը)

(Պատմուածք Սաների Խնկանի)

Զի կարելի տսել, որ Պ. փոքրիկ քաղաքը Ֆինլանդիայի ամենամնշան քաղաքն էր: Այնտեղ կայ տպարան, լրագիր է հրատարակում, բայց չեղ որ կան այնպիսի քաղաքներ էլ, որոնք չունեն ոչ մէկը և ոչ էլ միւսը: Եւ այդպէս, Պ. փոքրիկ քաղաքում հիմնուեց տպարան, այն էլ բոլորովին նոր և արտասահմանեան վերջին ձեւով: Մի բան միայն շատ մտատանչութիւն էր պատճառում նրա տէրերին, այն է՝ ոչինչ չը կար տպագրելու: Լրագիրը շաբաթական միայն երկու անգամ էր լոյս տեսնում: Մնացած օրերը տպարանը մատնուած էր անգործունէութեան, իսկ բանուորները, ոռնիկ ստանալով, թափառում էին դէս ու դէն, պարագութիւնից արբեցողութեամբ էին զբաղւում, գայթակղեցնում միւս բանուորներին և փոքրիկ քաղաքի խաղաղ ընակիչների դժգոհութիւնը գրգռում:

Հապա, ասացէք, ինդիրեմ, միթէ այդ կարգ է:

Բաժնետէրերն արդէն մի քանի անգամ ժողովուել էին միասին խորհրդակցելու այն կարեւոր հարցի մասին, թէ ինչ տպագրեն: Նրանք խորհեցին, դատեցին, վիճեցին, բայց չը կարողացան մի բան հնարել: Շատ լաւ ծրագիրներ առաջարկուեցին, շատ խելացի առաջարկութիւններ եղան, բայց այդ բոլորն էլ մանրազննին քննութիւնից յետոյ ինչ ինչ պատճառներով աննպատակայարմար համարուեցին, իսկ տպագրական մեքենան այդ միջոցին ժանդուում էր ու փչանում:

\* Ֆինլանդական աշխարհի մի անկիմի կեանքից վերցրած այս պատկերը պատկանում է ֆին բելետրիստ՝ Ներկալումս՝ „Päivälehti“ ֆին աղջարնակութեան կուսակցութեան արմատական մասի լրագրի խմբագիր պ. Ինզմանի գրչին: Թարգմանուած է ոռուերէնից:

Մի անգամ էլ ժողովուեցին, թւում էր թէ այդ ժողովն  
էլ նախսրդ ժողովների նման ապարդիւն պիտի անցնի, երբ  
յանկարծ տեղից բարձրացաւ բամնետիրերից մէկը՝ կաշուեթործ  
Նիրանէնը, Դա մի համեստ մարդ էր, որ իրան ձեռնհաս չէր  
համարում «գրական» նիւթերի մասին գատողութիւն տալ  
բայց տեսնելով, որ գործը գլուխ չի դալիս, նա յաղթահարեց  
իր ամաշկոտութիւնը և սիրտ առաւ իր ծրագիրն առաջարկե-  
լու:

—Մենք ապարան հիմնեցինք,—ակսեց նա, —մենք հիմնե-  
ցինք ապագրական գործի բամնետիրական ընկերութիւն, մենք  
ամիսն երկու անգամ ժողովում ենք, բայց ոչ մի կերպ չենք  
կարողանում տեղից շարժուել:

Թէնու ինձ համար այնքան էլ պարզ չէ, թէ ինչու մենք  
մերժում էինք ինչ որ էլ առաջարկում էր ապագրութեան,  
բայց յոյս ունեմ, որ իմ ծրագիրը բոլորիդ էլ դուք կը դայ: Ես  
առաջարկում նմ պատկեր մեր գործը, սկսելով սկզբից, այսինքն  
ես առաջարկում եմ տպագրել այբուբենարանն Միաքը բոլորո-  
վին նոր էր և միանգամից բոլորին էլ դուք եկաւ:

—Ես ջերմ կերպով պաշտպանում եմ մեր ընկերակցի գե-  
ղեցիկ ծրագիրը, ասաց պրատասան կառավարիչը, որ սովորա-  
բար ամենից առաջ էր բողոքում իւրաքանչիւր առաջարկու-  
թեան դէմ: — Ես միայն իմ կողմից այն կ'աւելացնեմ, որ ցան-  
կալի էր այբուբենարանի պատկերները Գերմանիայում պատու-  
իրել:

—Ես էլ մի և նոյն կրածիքին եմ, —սասաց տեղայի վա-  
ճառական Ռիխեռնէն: — Դա հաստատ գործ է, զրանում մենք  
ոչ մի կերպ չենք վնասուիլ, իսկ ժամանակին թերեւս լաւ օ-  
գուտ էլ ստանանք: Տպագրական ծախսերը մեծ չեն լինի,  
եթէ նոյն իսկ պատկերներն էլ Գերմանիայում պատուիրենք.  
Հեղինակի վարձատրութիւնն էլ մեծ ծախս չի պահանջի, իսկ  
ապրանքը հեշտ ծախսողներիցն է:

Ժողովրդական ուսուցիչ Պօսին, որ այդ բոլորի վրայ  
նայում էր աւելի բարձր և գաղափարական տեսակետից քան  
թէ միւսները՝ նոյնպէս այս ծրագրի կողմն էր:

—Մենք պէտք է չնորհակալ լինենք պ, Նիրանէնից նրա  
յաջող մտքի համար և միահամուռ կերպով ձեռնարկենք վերջնիս  
իրագործման: Մեզ, որպէս լուսաւորութեան մեծ գործի մէջ  
նոր մարդկանց, միանգաման վայել է փոքրից սկսել իսկապէս  
դա այնքան էլ փոքրիկ գործ չէ, որքան նա թւում է առաջին  
հայեացքից:

Հնդհակառակն, իմ կարծիքով...

Նա խօսեց երկար։ Կաշուեգործի առաջարկութիւնը համակրութիւն դառաւ և՝ քաղաքային ֆիսկալի և զիմապիայի վերատեսչի կողմից։ Չը հակառակեց նոյն իսկ բժշկապետը, միայն երբեմնակի ինքն իրան ծիծաղում էր։

Նախագահը, որ քաղաքում միակ վաճառականական խորհրդականն էր, համբերութեամբ լսում էր երկար ճառաբանութիւնները, Փիլիտոփայութեան մագիստրոսը մի առ մի արձաւնագրում էր այն բոլորը, ինչ որ խօսւում էր Երբ ամենքն իրանց կարծիքը յայսնեցին, նախագահը տեղից վեր կացաւ։

—Երկայ ժողովում բաժնետէրերից մէկը մինչանաւոր առաջարկութիւն արեց, որ ընդհանուր համակրութեամբ ընդունուեց և, որքան ինձ յայտնի է, ոչ մէկի կողմից առարկութեան չը հանդիպեց։ Ապա ուրեմն, ես զնում եմ առաջին հարցը՝ արդեօք պէտք է մենք, այսպէս ասած, ակսենք սկզբից։

—Այն։

—Ուրեմն մենք վճռում ենք, տպագրել պատկերազարդ այբուբենարան։

—Այն, այն։

—Եւ պատկերները Գերմանիայումն ենք պատուիրում։

—Այն, Գերմանիայում։

Նախագահը մուրճով զարկեց, ցոյց տալու համար, որ վիճաբանութիւնները վերջացած են, և սրբեց իր ճակատի քրածինքը։ Փառական Աստուծու, վերջապէս մի վճիռ կայացրինք։

Ամենքն էլ թեթեւութիւն գգացին, կարծես թէ մի լեռան չափ ծանրութիւն նրանց ուսերից վայր գլորունց։ Ուրեմն մենք էլ մի ըանի պէտքական ենք, ուրեմն մենք էլ խոտ արածողներից չենք։

Մի առ ժամանակ վէճերը և փոխադարձ դիմադարձութիւնները մոռացուեցին կատարած պարագի զգացողութիւնը և սեփական արժանապատւութեան զիտակութիւնը բաժնետէրերի մէջ առաջացրին եսանդի մի արտասովոր հոսանք և նրանք անմիջապէս ընտրեցին մի կարգադրիչ մասնաժողով, որից յետոյ ամենքը միասին գնացին հիւրանոց բարի գործի սկիզբը ըմպելիով ցօղելու։

Սնցաւ մի ամսից աւելի։ Այրուբենարանը կազմեցին, այսինքն վերցրին հէնց առաջին՝ պատահաբար իրանց ձեռքն ընկած հին օրինակը, տեղ-տեղ իրանցից աւելացրին մի քանի բան, բերել տուին պատկերները և նորից հաւաքուեցին՝ կարգադրիչ մասնաժողովի գեկուցումը լսելու։ Սեղանի վրայ գըրուած էին Գերմանիայից հէնց նոր ստացուած կիշեները, ուրոնք, ի հարկէ, ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեցին։ Ի մի-

Չի այլոց մի պատկեր ներկայացնում էր Յովսէփին՝ հօտն առածացնելիս:

—Նայեցէք, խնդրեմ, այս անսասուններին, կարծէք մեր առջեր կինդանի լինեն կանգնած:

—Սյան, իսկապէս: Իսկ այս կայտոռն հորթն իր ցցած պոչով... Զարմանալի՞ է:

Ճշմարիտ և, մոիկ արէք... հորթը վագում է՝ պոչը կեռ ցցած: Հրաշալի՞ է:

—Է՛, այդ ազրէն չափազանցութիւն է: Տարօրինակ երեւակայութիւն է՝ հորթը ներկայացնել այդպիսի անվայել զիրքով: Չեմ կարող ասել, թէ այդ յաջող միաք է եղել: —Նկատեց պոստատան կառավարիչը, ուրախանալով, որ վիճաբանելու առիթ է գտել:

—Կատարեալ անտեղի հանաք լուրջ գործի մէջ,—աւելացրեց վերատեսուչը:

—Ոչ թէ միայն անտեղի, այլ ուղղակի անվայելուչ, —բարձրացրեց ձայնը ժողովրդական ուսուցիչ Պոսիրն: —Հանաք, որ սաստիկ դիպչում է մարդու գեղեցկի զգացմունքին և վիրաւորում է ամօթխածութիւնը:

—Այստեղ ինչ անվայելուչ բան կայ... Պոչը պոչէ: Վերեւ ցցած, թէ ներքեւ կախ ընկած, մի և նոյն բանը չէ: Ինձ պատկերը դուր է գալիս: —Նկատեց կաշուեգործ Նիրանէնը:

—Իսկ ինձ ամեննեւին դուր չէ գալիս: Չեմ հասկանում, այբուբենարանի համար ինչպէս կարելի է նկարել այդպիսի լիտի բաներ: —Վերատեսուչն արհամարհական կերպով ձգեց սեղանի վրայ կլիշէն: —Այդպիսի բաներ, —նա մատը տնկեց կլիշէի վրայ ճիշտ այն տեղում ուր հորթի պոչն էր, —այդպիսի բաները չի կարելի տպագրել այբուբենարանում: Ես առաջարկում եմ մերժել նկարը:

—Այդ բանին ես համաձայն չեմ, —հակածառեց վաճառական Ռիխկոնէնը: Նկարները մենք ենք Գերմանիայում պատուիրել, զրանց համար փող ենք վճարել, և այն էլ ոչ քիչ: —Ինչու մեր փողերը իզուր կորչեն: Եթէ անպատշաճ է հորթը ցցած պոչով ներկայացնել, ապա ուրեմն մենք կը ձեւակերպենք առանց պոչի: ... Չե որ այդ անելը դժուար չէ:

—Այդ ինչ կը զառնայ... կը ստացուի անպոչ հորթ: —հարցրեց շուարուած մազիստրոսը, զլուխը չբարձրացնելով արձանագրութիւնից:

—Է՛, թէպէտ հէնց այդպէս: Բայց և այնպէս նկարը վայելուչ կը լինի:

—Միթէ մենք տպագրում ենք... անպոչ հորթը... Նախա-

դահը շփոթուեց, չիմանալով, թէ ինչ կերպով դնի հարցը ձայն  
նատութեան,

Տեղից վեր է կենում բժշկապետը:

—Պարսններ, այդ վէճը միտք չունի: Սրուեստագէտը նկա-  
րել է ջահիլ, աշխոյժ կենդանին իսկ և իսկ այն վայրկեանում,  
ռերբ նա, համակրուած ուրախութեան յանկարծակի բռնկումով  
շատկուում է դաշտում, մարմնի տարօրինակ շարժումներ անե-  
լով: Կենսուրախ զգացմունքը պատանեկութեան յատուկ է:  
Ծնծութեան յանկարծական բռնկումներ հորթերին յատուկ են,  
(այսաեղից—«հորթային հրճուանք»): Ուրախութեան այն ար-  
տափին արտայացութիւնները, որոնք մեզ անվայել են թւում  
ոչ մի ամօթալի բան չեն պարունակում, որովհետեւ բնական  
են, անարուեստ: Նկարիչը պարտաւոր էր ձեւակերպել հորթը  
պոչը ցից, որովհետեւ դա բնական է: Նա դրանով երեւան է  
հանել նուրբ զիտողութեան ընդունակութիւն, կենդանի իւմօր:  
Եթէ որ, հետեւելով կեղծ ամօթխածութեան, նա ներկայացնէր  
կայտառ հորթը պոչը կախ, այն ժամանակ նա կը մեղանչէր  
գեղարուեստական ճշմարտութեան դէմ, իսկ նրա արտադրու-  
թիւնը կը կորցնէր իր անկեղծութեան, ճշմարտութեան, իրա-  
կանութեան ամրող զրաւչութիւնը: Տարօրինակ է այդպիսի  
բան մերժելը, իսկ առաւել եւս տարօրինակ է հորթը պոչը  
զրկելը:

—Ինչ վերաբերում է իրական լինելուն, այդ ժամին ես  
չեմ վիճում: Պատկերն արդարի շատ իրական է,—ասաց վե-  
րատեսուչը, սկսելով տաքանալու—Բայց այդ գովաբանուած  
ուշականութիւնը ներկայ դէպում արգեօք յարմար է գալիս:  
Շունը իր լուսներն է քթըթում, խոզը թաւալում է ցե-  
խի մէջ, —չէ որ սրանք էլ զուտ իրական նիւթեր են, բայց թոյլ  
տուէք հարցնել, արգեօք սրանք յարմար նիւթեր են գեղարուեստ-  
ական նրկերի համար: Արգեօք այդ գեղարուեստական կերա-  
կուրն նրեխանների, մեր ժողովրդի երեխանների համար առող-  
ջարմար է:

—Է՛, ասենք այդքան էլ հեռու չի կարելի գնալ,—հակա-  
ճառեց պոտտատան կառավարիչը, որին հորթի պոչի ժամին յա-  
րուցած բոլոր վէճը՝ այնքան էլ լուրջ բան չէր թւում: Այդպիսի  
նչշին բաներին նշանակութիւն չը պիտի տանք: Միթէ գիւղա-  
ցի երեխանները ոչ մի անգամ չեն տեսել պոչերը ցից հորթերի  
եւ նրանք համարենա ամենայն օր են տեսնում այդ, և դրանից  
ոչ մի վատ բան չի դուրս գալիս:

—Ինչպէս, դուք ուրեմն ընդունում էք, որ այդ պատկերի  
0 գոստոս, 1902.

մէջ ոչ մի անպատկառ բան չը կայ: Ներեցէք... իմ խորին համոզմունքն է, որ մենք գլխիվայր ենք հասկանում մեր պարտականութիւնները: Հարիւր անգամ աւելի լաւ կը լինէր ամեն այրուբենարան չը տպագրել, և առհասարակ աւելի լաւ կը լինէր ոչ մի գիրք չը տպագրել: քան տարածել համանման ցեխ Ո՞ւ մ ենք մոլորեցնում: Մաքուր մանկական հոգիներին: Ո՞ւ տեղ ենք մայնում բարեկի ապականութիւն: Մեր ժողովրդի անարարա սիրաբ, Կարծես թէ մենք նպատակ ունենք քանդել այն բարոյական հիմքերը, որոնց վրայ կառուցւում է ազգի պատասխան:

—Ե՛ հարկէ, այդ միքիչ անվայելուչ բան է, որ հորթը ցցել է որոշը, —դրանում և կաշուեգործը համաձայն էր: —Բայց, —շարունակաց նա, —ախոր չը որ այդ յիմար երկշարաթական հորթ է, որից շատ բան պահանջել չի կարելի: Եթէ դա լինէր օրինակ կով կամ եզ, այն ժամանակ ուրիշ բան է: Իսկ հորթ, դա ոչինչ...

—Ոչ, ոչինչ չէ, —հակաճառեց հարկահանը:

—Ցոյց տուէք երեխաներին այդպիսի նկար, —նրանք ինչպիսի հասկացողութիւն կը կազմեն վայելչութեան և բարեկըրթութեան մասին:

Ես արդէն ասացի, որ զրանք դատարկ բաներ են, —նորից միջամտեց բժշկապետը: Արժէ արդեօք ամրող մի ժամ վիճաբանել այդպիսի յիմար բանի մասին և ներս խոթել այստեղ բարոյականութեան հարցեր... Հանդիսատ թողնենք այդ հորթը: Ասուուած նրա հետ, թող այրուբենարանի մէջ չը մտնի: Աւելի լաւ է խօսենք որ և է աւելի հետաքրքիր բանի մասին: Մենաք չը որ ուրիշ շատ, աւելի կարեւոր գործեր ունենք:

—Հարցը հորթի մէջ չէ, այլ սկզբունքի, այն իդեալների, որոնցով մեր բաժնետիրական ընկերութիւնը պիտի առաջնորդուի իր լուսաւորութեան գործի ընթացքում: —Վերատեսուչն աւելի բորբոքուեց: —Կասեմ աւելին, այսաեղ հանդիպել են իրար երկու աշխարհահայեցղութիւններ: Եւ մեր խաղաղ երկրունն էլ է սկսում բռնկուել կոփէն ազնիւ իդէալիզմի և այն ուղղութեան մէջ, որը նատուրալիզմ անմեղ անուան առկ խօսալէս քօղարկում է խորին ապականութիւն: Իմ բարոյական պարտք եմ համարում նախազգուշացնել ընկերներիս այդ մահաբեր թոյնից, որը հեշտութեամբ կարող է թունաւորել և փչացնել մեր գեղեցիկ գործը:

Բժշկապետը աթոռի վրայ սկսեց կուչ գալ Նախագահը նկատեց այդ և կարեսը համարեց վիճաբանութիւնն ընդհատեր: —Ներեցէք, պարոններ, դուք շատ շեղուեցիք հարցից:

Այդպէս մենք երբեք չենք վերջացնիլ ։ Հարցը դնենք: Եթէ ես շեմ սիսալում, առաջարկուած է երկու ծրագիր. ոմանք ցանկանում են, որ չարաբաստիկ պատկերն ամենեւին չը տպագրուի, ոմանք էլ ընդունում են, որ կարելի է տպագրել, բայց առանց պոչի: Սակայն, երկրորդ ծրագիրը, թւում է թէ, չի գտել բաւականաշափ կողմնակիցներ:

Այդ ժամանակ հարկահանը ձայն ինպրեց:

—Հենց այդ ծրագրի կողմնակից եռ, թէպէտ և, կարելի է, որ ես ասիթ չունեցայ որոշակի յայտնել իմ կարծիքը այդ ժամանին: Բոլոր դրախտութիւնը պոչի մէջ է. հէնց այդտեղ է միայն անոպատշաճութիւնը: Բայց դրա համար չարժէ այլուրենարանից գուրս հանել Հովսէփի և իր հօտիք կրթիչ պատկերը:

Կաշուեգործ Նիրանինը, իսկ նրա հետ միասին և պոստատան կառավարիչը, բողոքում էին անպոչ հորժի կողմնակիցների դէմ: Վէճը նորից բանկուեց: Ժողովրական ուսուցիչը դարձեալ սկսեց ճառել բարձր նիւթերի և այն վաճանդների մասին, որոնք, եթէ միայն տուած փաստի բոլոր հետեւանքները նախատեսուի, մնաս են սպառնում ժողովրդին և հայրենիքին: Վերատեսուչը նատուրալիստների դէմ արտասանած ճառով նրանց ջարդ ու փշուր արեց և բորբոքուած ասաց, որ կովտութեան պաշտպան մարդիկ թէպէտ և զանան են, բայց առաւել եւս երեւան են հանումը ամօթիսածութեան բացակայութիւն և դատելու անընդունակութիւն այն բանի մասին՝ թէ ինչ է չնորհալի, ինչը՝ ոչ:

Բժշկապետը կրակ կտրեց:

—Իսկ այն մարդը, որ կարմրում է պոչը տեսնելիս, երեան է հանում չափազանց կասկածելի բարոյականութիւն: Ժողովրդի, իսկ առաւել ևս երեխաների երեակայութիւնն առողջ է: Աստականուած է միայն նրանց երեակայութիւնը, որոնք տհաճութեամբ երեսները չուռ են տալիս՝ պոչը վերև ցցած հորթիդ: Այդ արդէն չափազանցութիւն էր: Նախագահն ընդհատեց վիճաբանողներին և ինդրեց նրանց ոսքը չը դնել անձնական հողի վրայ: Բայց վերատեսուչն արդէն գլխարկը վերցրել էր: Հրաժեշտ տալիս՝ նա մեղմ, կարծես թէ խղուած ձայնով արտասանեց մի քանի սրտաբուղիս խօսքեր այն մասին, թէ ինչպէս նրա համար ծանր է տեսնել, որ այնպիսի գեղեցիկ պտուղներ խոստացող գործը ստացել է կորստաբեր ուղղութիւն: Նա թօթափում է իր ոտների փոշին: Նմանապէս նա չի կարող անդամ մնալ այն ընկերութեան, որտեղ թոյլ նո տալիս վիրաւորել այն մարդկանց, որոնք համարձակ և ազնուաբար արտայայ տում են իւրեանց համողմունքները: Իսկ ինչ վերաբերում է

վիրաւորողին՝ նա դատաստանի առջև նրանից հաշիւ կը պահանջի: Նա դուրս գնաց, իսկ նրա յետից դուրս եկան ժողովրդական ուսուցիչը և հարկահանը: Մնացողներին տիրեց մի ծանր զգացմունք: Թւում էր նրանց, թէ հողը իրանց ոտների տակ օրօրւում է: Իրանց ընկերութեան ապագան, որ մի քիչ առաջ վարդագոյն լուսով էր ներկայանում աչքերին, յանկարծ անյայտութեան մառախուղով ծածկուեց: Եւ այդ բոլորը մի ինչ որ հորթի պոչի կամ անպոչ հորթի համար:

Վիճաբանութիւնները նորից արծարծելու մասին մտածելն անզամ աւելորդ էր: Վտանգաւոր էր բարձրացնել վիճելի հարցը, որ յանզում էր երկու կամ աւելի ճիշտ երեք հակասական վճիռների: Այդ կարող էր վերջնականապէս կործանել ընկերութիւնը: Գործը յետաձուեց երկրորդ նիստին, աւելի նրա համար, որ արդէն ուշ էր: Կաշուեգործի խորհրդի համաձայն իննդիրը պարզելու համար վճռեցին հարցնել ձեռնհաս և գործի մէջ չը շահագրգոււած անձանց՝ ինչպէս օրինակ քաղաքագլխի և քաղաքային պաստօրի կարծիքը Քաղաքագլուխը պատասխանեց, որ Պ. քաղաքի բնակիչները, ի հարկէ, մի քիչ կը խոռվուէին, եթէ տեսնէին հրապարակում վիճելի նկարի նման մի տեսարան: Բայց, ուշագրութեան առնելով, որ պատկերը ժողովրդի համար է նշանակուած, իսկ ժողովուրդն այդքան էլ մանրակրկիտ չէ, նա կարծում է, որ այդ կարելի է ուշագրութեան չառնել: Պատօրը անորոշ կերպով պատասխանեց, — որ ոչ Աստուածաշնչում, ոչ էլ եկեղեցական կանոնադրութիւնների մէջ չէ կարող պատասխան գտնել տուած հարցին:

Խորհեցին, և վճռեցին, որ պատկերը կարելի է տպել իրաւաբանական յայտնի սկզբունքի հիման վրայ, որով թոյլատրելի է համարւում այն բոլորը, ինչ որ օրէնքով չէ արգելուած:

Այդպէս էլ արին Այբուբենարանը լոյս ընծայեցին հորթի պատկերով: Հորթն էլ մնաց պոչով: Բայց վերատեսուչը, ժողովրդական ուսուցիչը և հարկահանը վերցրին իրանց վրայից ամեն մի պատասխանատութիւն այդչափ թեթեամիտ արարքի հետեանքների համար:

Նրանք վաճառեցին իրանց բաժինները:

Թարգմ. ՅՈՒ. ԱՏԵՓԱՆԵԱՆ